

8415



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմոնյան



«30» 07 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 141 - 24

Նախաձեռնող՝

«Շինաքար 2» ՍՊԸ

Սիսիան քաղաք, Աղոնցի փ. 7

Գործունեությունը՝

Գույթանասարի անդեզիփաբազալփրների հանքավայրի
արդյունահանում

Սյունիքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 141 - 24

« 30 » հունիսի 2024թ.

Գութանասարի անդեզիտաբազալտների հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Շինաքար 2» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզ, Շաքի բնակավայր

Ներածական մաս. «Շինաքար 2» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Սիսիան համայնքի Գութանասարի անդեզիտաբազալտների հանքավայրը գտնվում է Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի վարչական տարածքում, մոտակա բնակելի գոտուց 1 կմ հեռավորության վրա և Մ2 միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհից 96.0մ հեռավորության վրա:

Հայցվող տարածքի հողերը համայնքային են՝ նպատակայնի նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակության՝ անջրդի վարելահողի,։ Հանքարդյունահանման թույլտվություն ստանալուց հետո, սահմանված կարգով, հողերի գործառնական նշանակությունը կփոխվի արդյունաբերական ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտներ նշանակության հողերի: Հողամասի ընդհանուր մակերես կազմում է 4.41հա:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ 110-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի գ. ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Հանքավայրի տարածքը տեղակայված է 1845-1870մ բացարձակ բարձրության վրա, ռելիեֆը տիպիկ լեռնային է, տարածքում զարգացած են շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացված հողեր: Համաձայն հաշվետվության հանքավայրի տարածքում հողի բերրի շերտը բացակայում է, հողաբուսական շերտը՝ որն իրենից ներկայացնում է կավաավազային խառնուրդներ, համատարած ծածկոց չի կազմում, հանդիպում է հատվածաբար, առանձին գոգավորություններում՝ 5-20սմ հզորությամբ: Հանքարդյունահանման աշխատանքների ժամանակ դրանք հնարավորինս կհանվեն և կկուտակվեն՝ Կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի թիվ 1404-Ն որոշուման պահանջներին համաձայն, իսկ աշխատանքների ավարտից հետո՝ կօգտագործվեն խախտված տարածքների ռեկուլտիվացիայի նպատակով:

Տարածքին ամենամոտ ջրային ցանցը Շաքի գետն է, մոտ 0,6կմ հեռավորության վրա, տարածքում գրունտայի ջրերը բացակայում են : Հանքավայրի տարածքը տարածքում գրունտային ջրերը բացակայում են:



Տարածքի կլիման բնորոշվում է երկարատև տաք ամառներով և ցուրտ ձմեռներով: Օդի հարաբերական խոնավությունը 70% է, քամու տարեկան միջին արագությունը՝ 1,6 մ/վրկ:

Հանքավայրի տարածքում և հարակից տարածքներում գերակշռում են լեռնատափաստանային ենթաալպյան և ալպյան բուսականությունը, անտառածածկ չէ, ՀՀ Կարմիր գրքերում գրանցված պահպանության ենթակա բուսատեսակներ և կենդանատեսակներ, բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան, ամենամոտ պատմամշակութային հուշարձանը «Անանուն» աղբյուրն է որը գտնվում է նախգծվող տարածքից 500մ հեռավորության վրա:

Սյունիքի մարզի Գուֆանասարի անդեզիտաբազալտների հանքավայրի պաշարները հաստատվել են 1978 թվականի դեկտեմբերի 25-ի ՀԽՍՀ ՊՏՀ-ի թիվ 240 արձանագրությամբ: 1978թ.-ի հունվարի 1-ի դրությամբ՝ պաշարների հաշվարկմամբ ըստ կարգերի՝ A – 339.7հազ.մ³, B - 1188.6հազ.մ³, C₁- 1449.5հազ.մ³: Ընդհանուր՝ 2977.8հազ.մ³:

Գուֆանասարի անդեզիտաբազալտների հանքավայրի տարածքը ՇԱԹՎ-29/317 թույլտվությամբ 25 տարվա ընթացքում (27.03.1998-27.03.2023թթ.) շահագործվել է «Սյունիք» տնտեսական միավորում ՍՊԸ-ի կողմից՝ 4.41հա տարածքում 1.1 հա մակերեսով իրականացվել է 22500մ³ ծավալով օգտակար զանգված ծածկող մակաբացման ապարների հանում և կուտակում բացահանքի արևելյան մասում: Լցակույտառաջացման նպատակով զբաղեցվել է մոտ 1.5հա տարածք: Խախտված տարածքների ռեկուլտիվացիա չի կատարվել, քանի որ պաշարներն ամբողջությամբ չեն արդյունահանվել և հանքարդյունահանման աշխատանքները պետք է շարունակվեն:

«Սյունիք» տնտեսական միավորում ՍՊԸ-ին տրամադրված 866.7հազ.մ³ հաշվեկշռային պաշարներից առ 01.01.2023թ. դրությամբ՝ արդյունահանել է 19.5հազ.մ³ օգտակար հանածո: Գուֆանասարի անդեզիտաբազալտների հանքավայրի մնացորդային պաշարները կազմում են 2958.1հազ.մ³:

Անդեզիտաբազալտներն իրենց որակական հատկանիշներով համապատասխանում են 826-76 ՀՍ-ի և 8267-75 ԳՈՍ-ի տեխնիկական պահանջներին, կարող են օգտագործվել որպես երեսպատման իրերի, խճի, ինչպես նաև որպես լցանյութ բետոնի և երկաթբետոնի արտադրության համար:

Արդյունահանման աշխատանքները կատարվելու են բաց եղանակով՝ ընդլայնական, միակողմանի խորացմամբ, մակաբացման ապարների ներքին ժամանակավոր լցակույտերի տեղափոխումով, իրականացվելու է հորատասեպային եղանակով՝ էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով: Հորատապայթեցման աշխատանքները չեն կատարվելու, սանիտարապաշտպանիչ գոտու մեծությունը կազմում է 50.0մ:

Հանքավայրը բնութագրվում է հետևյալ կոորդինատներով (ARM WGS-84 կոորդինատային համակարգով).

1.X=4383063	Y=8584974
2.X=4383187	Y=8584911
3.X=4383296	Y=8585147
4.X=4383267	Y=8585151
5.X=4383068	Y=8585149
6. X=4383058.43	Y=8585134.07
S=4.4հա	

Բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ արդյունահանման՝ 37260մ³, օգտակար հանածոյի կորուստի ընդհանուր ծավալով՝ 45200մ³ (5.72%) է:
Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է 20 տարի:



Համաձայն նախագծի՝ բացահանքում 67900մ³ ծավալով մակաբացման ապարներից 8600մ³ ներկայացված է հողաբուսական շերտ, այլուվիալ դեյուվիալ առաջացումներ անդեզիտաբազալտների բեկորներով՝ 45600մ³ և ժայռային ապարներ 13700մ³ /հողմահարված, ջարդոտված անդեզիտաբազալտ/ ծավալով: Մակաբացման ապարները շահագործման սկզբնական շրջանում կուտակվելու են բացահանքի հարավ արևմտյան մասում: Շահագործման 10-րդ տարվանից սկսած մակաբացման ապարները տեղափոխվելու են բացահանքի արևմտյան մաս՝ աստիճանաբար ներքին լցակույտ ձևավորելու համար: Շահագործման ավարտից հետո իրականացվելու է 4.41հա խախտված հողերի վերականգնում՝ տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա: Ռեկուլտիվացման աշխատանքներն իրականացվելու են Կառավարության 2017թ. դեկտեմբերի 14-ի թիվ 1643-Ն որոշման պահանջների համապատասխան:

Բացահանքում արդյունահանման աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ՝ էքսկավատոր-հիդրավլիկ մուրճ, էքսկավատոր, բուլդոզեր-փխրեցուցիչ և ավտոինքնաթափ:

Գործունեության իրականացման ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ խմելու և տեխնիկական նպատակներով (ճանապարհների, աշխատանքային հրապարակների, լցակույտերի մակերոտով տարածքների փոշենստեցման համար): Տեխնիկական և խմելու ջուրը նախատեսվում է բերել ՍԻ-ԵԱԿ-1.4 ջրի ցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով «Վեոլիա Ջուր» և «Սյունիք» ՋՕ ընկերությունների Սիսիան տեղամասից, որոնց հետ ձեռք է բերվել նախնական համաձայնություն: Կենցաղային կեղտաջրերը հավաքվելու են հորատիպ զուգարանում, որը դատարկվելու է մասնագիտացված կազմակերպության կողմից:

Բացահանքի շահագործման ընթացքում առաջանալու են տարբեր վտանգավորության դասի թափոններ՝ բանեցված շարժիչի և դիզելային յուղերի մնացորդներ, ինչպես նաև բանեցված անվադողեր և կապարե կուտակիչներ: Թափոնները հավաքվելու են տարանջատված ըստ տեսակի, հավաքման և պահման համար անհրաժեշտ պայմանների, հետագայում պայմանագրային հիմունքներով հանձնվելու են լիցենզավորված կազմակերպություններին: Պինդ կենցաղային թափոնները կուտակվելու են տարածքում առկա աղբամանների մեջ և տեղափոխվելու մոտակա աղբահավաք կետեր:

Բացահանքի շահագործումից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքների գետնամերձ կոնցենտրացիաները չեն գերազանցում բնակելի գոտիների համար սահմանված նորմերը:

Համաձայն գնահատման հաշվետվության նախատեսվում է իրականացնել Կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N 191-Ն որոշմամբ հաստատված մշտադիտարկումներ /հող, ջուր, օդ և այլն/: Մշտադիտարկումների իրականացման նպատակով տարեկան կհատկացվի 150հազ. ՀՀ դրամ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն /մեղմացմանն նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումներ և մոնիթորինգ.

- մթնոլորտային օդ աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ,
- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին (օրական 2 անգամ),



- օգտագործված յուղերի, նավթամթերքների հավաքում առանձին տարաների մեջ, արտադրական հրապարակի հատուկ հատկացված վայրում՝ արևից և անձրևներից պաշտպանված ծածկի տակ, տակդիրների վրա,
- շինարարական տեխնիկայի սպասարկման և կայանման վայրերում ավազի կամ մանրախճի տեղադրում՝ հողային ռեսուրսների աղտոտումը կանխելու նպատակով,
- տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկումը և ընթացիկ վերանորոգումը իրականացնել տեխնիկական սպասարկման կայաններում,
- առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջների ապահովում,
- բացահանքի արդյունաբերական հրապարակի շրջակայքում և հարավային եզրագծով /Շաքի բնակավայրի ուղղությամբ/ հնարավոր չափով իրականացնել կանաչապատում դիմացկուն և դեկորատիվ ծառաթփատեսակներով,
- աշխատողների առողջության, հրդեհային և տեխնիկական անվտանգության ապահովում, արտակարգ իրավիճակների պատրաստվածություն և այլն:

Բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի իրականացման համար նախատեսվելու է տարեկան 200000 հազար ՀՀ դրամ: ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ հաշվարկվել է հանքավայրի փակման համար ֆինանսական երաշխիքը՝ 1737,2 հազար ՀՀ դրամ: Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման նպատակով նախատեսվում է կատարել տարեկան 300 հազ. ՀՀ դրամ ֆինանսական ներդրում, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում տրամադրել տեխնիկա, խիճ և ավազ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Սյունիքի մարզի Սիսիան համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, արտակարգ իրավիճակների, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունները, կադաստրի կոմիտեն: Փափելով առկա է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դրական փորձաքննական եզրակացությունը:

Փորձաքննական գործընթացի մասնակիցների և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումների դիտողություններով ու առաջարկություններով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը /այսուհետ՝ ՇՄԱԳ/ լրամշակվել է: Հանքավայրի տարածքի սահմանները փոփոխվել են, փորձաքննության արդյունքում, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարծիքի համաձայն՝ հողամասի շրջադարձային կետերի կոորդինատներով տարածքը համադրվում է 09-070-0134-0019, 09-070-0134-0001, 09-070-0132-0001, 09-070-0132-0033, 09-070-0536-0001 կադաստրային ծածկագրերով հողամասերի հետ, որոնցից 3-ը /09-070-0134-0001, 09-070-0132-0001 և 09-070-0536-0001 կադաստրային ծածկագրերով/ հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային Ծրագիր 4-ի շրջանակներում՝ Արտաշատ-Սիսիան ճանապարհահատվածի նախնական նախագծի և հողամասերի օտարման և տարաբնակեցման նախնական ծրագրի համաձայն՝ գտնվում են Մ-2 Երևան-Երասխ-Նորավան-Տաթև-Կապան-Մեղրի միջպետական նշանակության



ավտոմոբիլային ճանապարհի օտարման գոտու սահմաններում: Փորձաքննական գործընթացում պարզվել է, որ հանքավայրի հայցվող տարածքում առկա է ընդհանուր օգտագործման դաշտամիջյան ճանապարհ: ՇՄԱԳ-ը ուղարկվել է լրամշակման, սակայն լրամշակված նախագծում և ՇՄԱԳ-ում փոփխված է կոորդինատներով տարածքը ևս համդրվել է վերը նշված ճանապարհահատվածի հետ:

ՀՀ կառավարության 2009թ. հունիսի 8-ի թիվ 968-Ա որոշման 1-ին կետով, առաջարկվել է կասեցնել նախատեսված Մ-2 միջպետական նշանակության ճանապարհի պաշտպանական գոտիներում և օտարման շերտերում իրականացվող շինարարական աշխատանքների, ինչպես նաև այդ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ հողամասերի օտարման, օգտագործման տրամադրման, կառուցապատման, դրանց նպատակային կամ գործառական նշանակության փոփոխությունների հետ կապված գործընթացները:

Ելնելով նշյալից հանքավայրի հայցվող տարածքն ունի համադրումներ Ճանապարհի օտարման գոտու սահմանների հետ, ինչպես նաև տարածքում առկա է ընդհանուր օգտագործման դաշտամիջյան ճանապարհ: Ուստի հանքավայրի արդյունահանման աշխատանքները նպատակահարմար չեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական հիմնավորումները և առաջնորդվելով Օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով՝ Գութանասարի անդեզիտաքաղախների հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

[Handwritten signature]

Ռուզան Մակինյան